ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱՇԵՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տարիներին ինչ-ինչ դրդումներով ոչ մասնագիտական մամուլի էջերում պատկանելությամբ քննարկելի դարձած Թիֆլիսի *Նորաշեն* անունով հայտնի Ավետյաց Սուրբ Աստվածածնի եկեղեցին գմբեթավոր բազիլիկ կառույցների տիպին է պատկանում և ուշագրավ է թե՛ իր արտաքին հարդարանքով, թե՛ գտնված տեղով (վրաց գլխավոր Սիոնի տաճարից և քաղաքի հայտնի հյուրատուն – քարվանսարաներից ոչ հեռու) և թե՛ ճարտարապետական առինքնող տեսքով:

Իբրև Թիֆլիսի հայկական գործող եկեղեցիներից մեկը՝ այն հիշատակվում է 1673 թվին այս քաղաք այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի «Ճանապարհորդություն Պարսկաստան և Արևելքի այլ երկրներ» գրքի երկրորդ հատորում. «Հայկական գլխավոր եկեղեցիներն են՝ *Փաշա-վանքը* (նշանակում է Փաշայի վանք) … *Սուրբ Նշանը* (կիրառվում է Սուրբ Խաչ ձևը), *Բեթխեն* կամ *Բեթղեհեմ, Նորաշեն* կամ *Նոր շինութիւն* և *Մողնի*»: Ֆրանսերեն բնագրի 1811 թ. հրատարակիչ – խմբագիր Լ. Լենժլեն (հ. II, էջ 73-79) Շարդենի այս վկայությունը օժտել է XVIII դարի ճանապարհորդներ Գյուլդենշտեդտի և Ռայնեգսի ուղեգրություններից քաղված ծանոթագրություններով, ըստ որոնց Թիֆլիսում գործում է 15 վրացական և 20 հայկական եկեղեցի: Ընդ որում անուն առ անուն թվարկած քսան եկեղեցիներից 7-րդը «Նորաշենի՝ նոր եկեղեցին» է:

Շարդենից շուրջ երեք տասնամյակ անց՝ 1701 թվին Թիֆլիս է այցելել նրա հայրենակից բուսաբան Ժոզեֆ-Պիտտոն Տուրնեֆորը, որի «Արևելյան ճամփորդության տեղեկագիր» աշխատությունը լույս է տեսել 1717 թ. ֆրանսերեն, ապա թարգմանվել այլ լեզուներով, այդ թվում նաև ռուսերեն ու վրացերեն: Նրա արձանագրմամբ «Թիֆլիսում կա շուրջ 20000 բնակիչ՝ 14000 հայ, 3000 մահմեդական, 2000 վրացի և 500 հռոմեադավան կաթոլիկ: Այս վերջիններս դարձի բերված հայեր են, իրենց մնացած հայրենակիցների երդվյալ թշնամիներ: Իտալացի կապուչիները ոչ մի կերպ չեն կարողանում հաշտեցնել»: Տուրնեֆորը ևս անհրաժեշտ է նկատել հիշատակել Թիֆլիսում եղած պաշտամունքային կառույցների քանակը. *«Թիֆլիսում հունական դավանության (իմա՛ վրացական-Պ.Մ.) 5 եկեղեցի կա՝ 4-ը քաղաքում, մեկը արվարձանում, հայկական՝ 7 [եկեղեցի] և 2 մզկիթ ամրոցում»:*

Այստեղ մեկ կարևոր վրիպում կա. Տուրնեֆորը վրաց Ս. Սիոն կաթողիկոսանիստ եկեղեցին կոչում է հայկական և թյուրիմացաբար տեղորոշում «Կուրի մյուս կողմում, դիք ժայռի վրա»՝ ըստ ամենայնի այն շփոթելով Մետեխի Ս. Աստվածածին վրացական եկեղեցու հետ, ուր նոր շրջանի տեղագրողները ավանդաբար Ս. Շուշանիկի գե-

րեզման են վկայում: Հիշյալ շփոթությունը սրբագրելուց հետո Թիֆլիսի հայկական եկեղեցիների թիվը կդառնա 6, ինչպես որ ունենք Շարդենի մոտ: Ուրեմն այստեղ էլ հայկական եկեղեցիների շարքին է *Նորաշենը:* Արդեն ասացինք, թե Գյուլդենշտեդտի կազմած հայկական եկեղեցիների ցանկում Նորաշենը 7-րդ եկեղեցին է:

Հայոց Սիմեոն կաթողիկոսի 1773 թ. կոնդակում ասվում է, թե Թիֆլիս օրինյալ քաղաքի երեք եկեղեցիները՝ *Մուղնու, Նորաշենի և Բեթղեհեմի* «հրամանաւ առաջին հայրապետացն Հաղբատի վանքին են տրուած» (Կաթ. դիվան, թղթ. 243 վավ. 36): Ի պատասխան կաթողիկոսի հորդորի Թիֆլիսի հայկական եկեղեցիների ավագերեցներն ու քահանաները «համահաւանութեան ձեռագիր» են ուղարկում Էջմիածին (Կաթ. դիվան, թղթ. 243, վավ. 35), այն օժտելով գործող 6 եկեղեցիների հոգևորականների ստորագրությամբ, որոնցից *չորրորդը Նորաշենի* ավագերեց Տեր Մելիքսեթն ու քահանա Տեր Գաբրիելն են:

Ժամանակագրական առումով հաջորդ աղբյուրը, ուր *Նորաշենը* քանիցս հիշատակվում է պաշտոնապես իբրև Հաղբատի թեմին պատկանող Թիֆլիսի հայոց եկեղեցի՝ հաստատագրվում է դատական մի վեճի կապակցությամբ՝ 1779 թ. Հերակլ արքայի կողմից նշանակված հեղինակավոր հանձնաժողովի կազմած ու ստորագրած վրացերեն վավերագրում: Վրացական աղբյուրներով քաջ հայտնի հայագետ-վրացագետ, թարգմանիչ և Թելավի ու Թիֆլիսի հոգևոր սեմինարիաների ուսուցչապետ Փիլիպոս քահ. Ղայթմազյանը ժամանակին դիմել է Հերակլին և *Նորաշենի մոտ* տան տեղ է խնդրել: Հերակլը բավարարել է խնդրանքը և եկեղեցու պարսպից դուրս տան տեղ է տվել: Ժամանակ անց վեճ է առաջացել պարսպի տակ ապրող գլեխների (գեղջուկների) և Տեր Փիլիպոսի միջև: Ըստ գլեխների և Հաղբատի թեմական վկայության՝ Ղայթմազյան (Ղայթմազաշվիլի) քահանան «պարսպից ներս է տեղ զբաղեցնում»: Վրաց կաթողիկոս Անտոն Ա-ի և թագավոր Հերակլի կարգադրությամբ վրացի և հայ բարձրաստիճան անձանցից կազմված հանձնաժողովը (այդ թվում և մդիվանբեգ, մդիվան, ամիլախոր, մոլարեթուխացես, արքեպս., քահանաներ և այլն) քննություն է կատարում և վճռում, որ պարսպապատ կալվածքը, ինչպես և եկեղեցին Հաղբատին է պատկանում: Ընդ որում ստորագրողները անհրաժեշտ են նկատել անդրադարձ կատարել անցյալին և ասել, որ երբ Հերակլը Թիֆլիսի բերդը թաթարներից առ ինքը գրավեց, *«այն ժամանակ բերդի ներսում Նորաշենի այս հին տաճարը երևան եկավ, և քանի որ հնում Հաղբատի եկեղեցուն էր պատկանել՝ նույն եկեղեցուն էլ նվիրեց»:*

Ուրեմն Նորաշենի դավանական ու էթնիկական պատկանելությունը անվերապահ է եղել, ուստի վեճը տան ու խանութների տեղերի՝ Հաղբատի վանքին թե Տեր Փիլիպոսին պատկանելուն է վերաբերել: Այս վավերագրի վրացերեն բնագիրը հրատարակված է «Վրաց իրավունքի հուշարձաններ» ժողովածոյի 5-րդ հատորում (Թիֆլիսի, 1974 թ. էջ 72-74) և երկու անգամ թարգմանվել ու հրատարակվել է հայերեն (Վ. Մարտիրոսյան, Պ. Մուրադյան):

Մենք չգիտենք՝ Մխիթարյան հայր Ղուկաս Ինճիճյանը Թիֆլիսն ու տեղի հայոց եկեղեցիները նկարագրելիս կամ թվարկելիս գրառել է տեղում տեսա՞ծը, թե աղբյուրներից ու ականատեսներից կարդացածն ու լսածը: Բոլոր պարագաներում նրա աշ-

խատասիրությամբ Վենետիկում 1806 թ. լույս տեսած «Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի» գրքի Ասիային նվիրված Ա հատորում Թիֆլիսի 13 հայկական եկեղեցիների շարքում 10-րդը Նորաշենն է (էջ 277):

Ղ. Ինճիճյանին հաջորդած Մխիթարյան ուղեգիրը Մինաս Բժշկյանցն է, որը Թիֆլիսում եղել է 1824 թ. հետո, բայց մինչև 1830 թվականը, քանի որ այդ տարի նա հրատարակել է իր «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս՝ բնակելոց ի Հայկազնեաց…» գիրքը (Վենետիկ, 1830): Այստեղ գիտնական հայրը տալիս է զանազան վիճակագրական տեղեկություններ: Մասնավորապես՝ «Բնակիչք մեծի քաղաքիս են զանազան ազգք ընդ ամենայն հաշուին *քսան հազար* տունք, իսկ տունք Հայոց են 5000, որք յառաջագոյն ունէին 24 եկեղեցիս. այլ յառնուլ Մէհէմէտ խանին զայս քաղաք՝ (խոսքը Աղա-Մահմեդ-Խանի 1795 ավերածության մասին է-Պ. Մ.) շատք քանդեցան: Այժմյան եկեղեցիք Հայոց, բաց ի Վանուց (իմա՛ բացի Փաշի վանից-Պ. Մ.) են 10, զորս նոքա կոչեն ա) Սուրբ Նշանի, Մօղնու, բ) Ճիկրաշէն, գ) Բեթղեհեմի, դ) Մեծ բերդի, ե) Փոքր բերդի, զ) Սուրբ Գէորգայ, է) Սուրբ Սարգսի, որ է արտաքոյ քաղաքին մերձ ի վանս, ը) եկեղեցի Խօճենց որ ի Հալապարն, թ) Սուրբ Սարգ[իս] մերձ բաղանիս, Սուրբ Կարապետանկոյս գետոցն» (□ 616):

Այստեղից պիտի եզրակացնել, թե *Նորաշենը* այն եկեղեցիների շարքին է, որոնք Աղա-Մահմադ-Խանի կատարած կոտորածից, ավերածությունից հետո մինչ Մ. Բժշկյանցի Թիֆլիս գալու տարին դադարել են գործելուց, թեև Մողնի եկեղեցու հայ համայնքի 1796 թ. մարտի 22 որոշման տակ կարդում ենք նաև *Նորաշենի* սպասավոր Տեր Հակոբի ստորագրությունը (ՄՄ Կաթ. դիվան, թղթ. 6, վավ. 69): Մի երկու տասնամյակ հետո աղբյուրներում Նորաշենը վերստին հայոց գործող եկեղեցի է հիշատակվում: Այսպես, ակադ. Կ. Կեկելիձեի անվան Թիֆլիսի Ձեռագրերի ինստիտուտի S հավաքածոյի N 3034 տակ պահպանվել է վրաց արքունիքի երբեմնի ավագերեց, ծանոթ պատմաբան Պլ. Իոսելիանիի հայր Էգնատե Իոսելիանիի (1764-1844) 1837 թ. կազմած «Թիֆլիսի հույն-ռուս-վրաց և հայկական եկեղեցիների» նկարագրությունը, ուր իբրև Հայոց չորրորդ եկեղեցին Թիֆլիսում ներկայացված է մեզ զբաղեցնող կառույցը: Այստեղ կարդում ենք. «Թագավորական քարվանսարայի արևմտյան կողմում կա *Նորաշեն (Ախալշենի)* կոչված մի եկեղեցի՝ հանուն Վերափոխման Աստվածածնի, գմբեթավոր, բարեշեն աղյուսով ու կրով, չորս սյան վրա կառուցված: Գմբեթը սև տաշած սալաքարով է ծածկված, իսկ թևերը՝ կարմիր աղյուս-կղմինդրով: Դրսից սրա տեսքը ավելի դուրեկան է, քան ներքուստ: Հիմնադրված է նախ ոմն Խոջա Նազարի ծախքով և ապա շենքը շարունակել են և ավարտել Տփղիսի կանանց և արանց ձեռնեռեցությամբ <հավաքած> միջոցներով՝ 1737 թվին. և նրանից հետո մինչև այժմ էլ շինվում է: Այստեղ են մի ավագ քահանա և հինգ քահանա» (ձեռ. S-3034, վրաց. բնագիրը հրատարակել, ապա և հայերեն է թարգմանել պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը): Ուրեմն իսկապես՝ Մ. Բժշկյանցի այցելությունից որոշ ժամանակ անց եկեղեցին նորից գործել է, նույնիսկ հինգ քահանա ունեցել:

Արդեն ասացինք, որ Էգ. Իոսելիանիի նկարագրությունը վերաբերում է 1837 թվականին: Նրանից հետո եղած բոլոր ցանկերում (Մ. Բրոսե, Պլ. Իոսելիանի, Ս. Ջալալ-

յանց, Անանուն և այլն) Նորաշենը մշտապես ներկայանում է իբրև հայոց հաղբատապատկան գործող եկեղեցի:

Վավերագրական տեղեկությունն առավել լիակատար դարձնելու համար անհրաժեշտ ենք նկատում վկայակոչել ևս երկուսը. 1745 թ. Խոջա Բեհբուդի թոռնորդի Մելիք Աղան և նրա եղբայր Ստեփանոսը Թիֆլիսի հայոց եկեղեցիների շաբաթ և կիրակի օրերի պատարագիչ քահանաներին արտոնում են Խոջի բաղնիսում անվարձ լողանալ և դրամարկղից 100 դիան ստանալ: Թվարկված եկեղեցիների մեջ է նաև *Նորաշենը* («Լումայ», 1899, գիրք Բ, էջ 279-281): Երկրորդ փաստաթուղթը վրացերեն է. Թիֆլիսի մոուրավ Դավիթ սարդարը (Հերակլի փեսան) քաղաքի հայ քահանաներից պահանջում է Աստծո առաջ վկայել, թե քաղաքում քանի՞ մոուրավ, մելիք և նացվալ է եղել նախորդ թագավորների ժամանակ: Պատասխանողների մեջ է Նորաշեն եկեղեցու «փոքր ծառա» Տեր Հակոբը («Սաք. սիձվելենի», հատ. III, Թիֆլ. 1910, էջ 15-17):

Գուցե ավելորդ չէ ասել նաև, թե XIX դարում վրացերեն կազմված հայոց եկեղեցիների մեկ այլ ցանկում ևս (Sd - 2343) 21 գործող պաշտամունքային կառույցների շարքում 12 համարի տակ նշանակված է Նորաշենը:

Այս ամենը փաստում են, որ XVII դարից սկսած մինչև XX դարի 20-ական թվականները գոյություն ունեցող բոլոր աղբյուրների վկայությամբ Թիֆլիսի Նորաշեն եկեղեցին գործել ու ճանաչվել է իբրև անվերապահորեն լուսավորչադավան հայոց եկեղեցի:

Այժմ անհրաժեշտ է պարզել նրա հիմնադրության և վերանորոգությունների ժամանակագրությունը և արդյունավորողների ինքնությունը: Նորաշենին վերաբերող գրականության մեջ այս հարցերը հատուկ քննության առարկա չեն եղել, որովհետև նրա մասին խոսողները ձեռքի տակ աղբյուր չեն ունեցել և կամ ոչ մի բանական պատմաբանի կամ վանականի միտքը այնքան չի խաթարվել, որ Աստծո այդ տունը մի համայնքից ու դավանանքից վերցնի և եռին հաշվով մեկ այլ հանրության հատկացնի: Եթե վերևում մեր բերած արխիվային ու պատմողական տարբեր լեզուներով եղած փաստերը անծանոթ են մնացել վեճեր ու կասկածանքներ հարուցողներին, ապա գոնե երկու տպագիր աշխատություն հետաքրքրվողները կարող էին բացել ու կարդալ. դրանցից մեկը հանգուցյալ պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» գրքի 3-րդ հատորն է (Երևան, 1955, էջ 266), ուր հայերեն թարգմանությամբ հրատարակված է «Անանուն հնագետ» կոչվածի (իրականում Էգ. Իոսելիանիի) տեղեկանքը այդ եկեղեցու մասին (վրացերենը հրատարակված է 1924 թվին), մյուսը տողերիս հեղինակի «ԸՐՎÿվրՍՌÿ ֆտՌչՐՌԻՌՍՌ թՐցջՌՌ: ՁոՌսՌրՌ» գիրքն է (Երևան, 1988, էջ 74-81): Այս երկրորդում կարելի է գտնել աղբյուրների ու գրականության բավական հարուստ ցանկ և որ կարևոր է՝ վիմագրերի լիակատար հրատարակություն ու թարգմանություն, այդ թվում և այնպիսիների, որոնք այսօր մի չար ձեռքի «խնամքով» չքացել են:

Վիրահայոց հոգևոր առաջնորդ Ներսես արքեպս. Աշտարակեցին XIX դարի առաջին քառորդում Թիֆլիսի հայոց եկեղեցիների ավագ քահանաներից պահանջում էր գրավոր տեղեկացնել, թե ինչ գրավոր ու բանավոր հիշատակներ կան իրենց սրբա-

բանների կառուցման, նորոգումների, երախտավորների ու ունեցած եկամուտների մասին: Բացառություն չի կազմել նաև Նորաշենը: Բարեբախտաբար Երևանի Մատենադարանում (Կաթ. դիվան, թղթ. 6, վավ. 69) և Թիֆլիսի Ձեռագրերի ինստիտուտում (Arm. d. 156) պահպանվել են Աշտարակեցու ստացած պատասխանները, ուր ներկայացված են շինարարական ու նորոգչական պահպանված արձանագրությունները:

Ահա դրանք.

«Ի թուին ՋԾԶ (956+551=1507): Յանուն Աստուծոյ ես Սատաթս մուքլս շինեցի զեկեղեցի՝ յիշատակ ինձ և ծնողացն իմոց՝ հօրն իմոյ պարոն Սուլտանին և պապուն իմոյ պարոն Թաւաքալին, և կողակցոյն իմոյ Վիշէլին, որդոցս՝ Նարիմանին, Սուլտանին և Շարիմանին»:

«Ի թուին ՌՂԹ (1650) շինեալ է Խօջայ Նազարն և զկնի շինութեան եկեղեցւոյ բոլոր իշխանութիւնն յանձնեալ է իձեռս հանգուցեալ Մելիք Աշխարբեգին Բէհբուդեան հաստատուն գրով, որոյ սոյն գրոյ թիւն է 1714»:

«Ի ՌՄԽԴ թուին (1795) հանգուցեալ Տէր Գրիգորն Նորաշէնու սկիզբն է արարել նորոգ շինութեանն՝ հրամանաւ հանգուցեալ Մելիք Աւետիքին Բէհբուդեան»:

«ՌՄԾԷ թուին (1808) գործակալ Տէր Ղազարն համակամութեամբ պարոն Մկրտում Մանթոյեանին և քանի մի պատուելի անձանց սկիզբն արար շինութեան»:

Հետևաբար Նորաշենի պատմության այս անխարդախ վկաները որևէ երկմտանքի տեղ չեն թողնում, որ Սատաթ անունով մի հայ մեծատուն 1507 թվականին ծախսել է իր ունեցվածքը (մուլք) և իշխանական ու տոհմիկ ծագում ունեցող (այդ պարագայում միայն նրանք *պարոն* կարող էին կոչվել) պապի՝ Թավաքալի, հոր՝ Սուլտանի, իր կողակից Վիրշելի, որդիներ Նարիմանի, Սուլտանի (պապի անուն է կրում), Շարիմանի և իր հիշատակի պահպանության համար եկեղեցի է կառուցել:

Կառուցումից շուրջ հարյուր հիսուն տարի անց եկեղեցին հիմնավոր նորոգության պետք է ունեցել, ուստի ջուղայեցի հայտնի մեծատուն Խոջա Նազարը նորոգումը ավարտելուց մեկ տարի առաջ՝ 1649 թ. եկեղեցու պատի մեջ ներքուստ խաչքար է տեղադրել՝ այն օժտելով իրողությունը հաստատող արձանագրությամբ, որ «Արարատ» հանդեսի 1850 թվականի N4 պրակում (էջ 53) հրատարակել է Թիֆլիսը նկարագրող անստորագիր մի հեղինակ:

«Սուրբ Խաչս բարէխաւս է Նազարին եւ / կողակցուն Եագունդուն եւ որդւոցն / Պաղինին, Բաղդասարին և ծնօղացն / Բերդիմին, Բէգիխաթունին եւ եղբարցն՝ / Շարոյին եւ Զուրապին: Ի թուականին ՌՂԸ (1649)»,

Ընդ որում՝ այս Նազարը ավարտելուց հետո եկեղեցու «բոլոր իշխանությունը» պաշտոնական «հաստատուն գրով» (իմա՛ հատուկ նվիրագրով) հանձնել է Թիֆլիսի պատմության մեջ քաջ հայտնի Աշխարբեկ Բեհբուդյանին, որը ոչ միայն հայազգի էր, այլ նաև Նազարի հայրենակիցը Նոր Ջուղայից: Նվիրագիրը թվագրված է եղել 1714 թ: Պատահական չէ նաև, որ Աշխարբեկ Բեհբուդյանի ժառանգներից (թոռնորդի) Մելիք Ավետիք Բեհբուդյանը 1795 թ. Նորաշենի քահանա Տեր Գրիգորին հանձնարարել է «նորոգ շինութիւն», այսինքն հիմնավոր նորոգություն սկսել, որ հետագայում շարունակել են Էջմիածնի գործակալ Տեր Ղազարը՝ Մկրտում Մունթոյանի և մի քանի այլ

«պատուէլի անձինք»՝ առ այդ թողնելով հատուկ արձանագրություն (1808):

Նորաշենի կառուցման հանգամանքների կապակցությամբ ուշագրավ վարկած ունի Թիֆլիսում հրատարակվող «Արարատ» հանդեսի «Ստորագրութիւն Տփխիս քաղաքի» տեղեկատվության հեղինակը: Նրա ներկայացմամբ Շահ Աբասը 1617 թ. գրավում է Թիֆլիսը և հայերի ձեռքից վերցնում Նարիղալայի մոտ գտնվող Ս. Կաթողիկե եկեղեցին: «Այն ժամանակ,- գրում է նա,- Հայոց ազգն եկաւ քաղաքի մէջ, շինեցին միւս փոքր Կաթողիկէ եկեղեցի և անունն դրին Նորաշէն: Նորաշէն Կաթողիկէ եկեղեցւոյ շինութիւնն, որ էլաւ 1649 և 1650 թուին, Հայոց ՌՂԸ և ՌՂԹ թուին, այլ պատճառ ևս ունի. որովհետև հին Կաթողիկէ եկեղեցին շինուած էր այն հրապարակի մօտ, ուր կասվի Թուրքի մէյտան, մեր Հայոց կանանց պարկեշտութեան չէր վայելում Թուրքաց մէջէն անցուդարձ անել, էնտուր համար Նորաշէն Կաթողիկէն ուզեցան ունենալ քաղաքի մէջ, որ իսկական Հայոց թաղումն էր, և կանանց՝ Թուրքաց աչքէն պահպանվելոյ յարմար: Նորաշէն եկեղեցու մէջ կան երեք մարմարիոն խաչքարի վրայ գրուած յիշատակարաններ...»(«Արարատ», Ա տարի, համար 4, 1850, սեպտեմբերի 23, էջ 53-54):

Եթե անհրաժեշտություն լինի՝ թվարկված բազմակի աղբյուրներին կարելի և ուրիշները գումարել ու հայոց Նորաշեն եկեղեցու պատմության նորանոր մանրամասնություններ պարզել: Երկու-երեք տասնամյակ առաջ, երբ Թիֆլիսի հայերեն արձանագրությունների դիվան էի կազմում, Նորաշենի պատերին, ցանկապատի վրա, բակում կային մեկ տասնյակից ավելի շինարարական, նորոգչական, տապանային վիմագրեր, որոնք լուսանկարված ու հրատարակված են «ԸՐՎÿվրՍՈÿ ֆտՌչՐՈՒՌՍՈ թՐցջՌՌ: ՁՈՌսՌրՌ» գրքի 6 էջ կազմող VIII աղյուսակում: Այսօր նրանց մեծ մասը այլևս գոյություն չունի: Ցավալի, նույնիկ անհավատալի իրողություն է՝ վրացազգի մարդու իսկ ձեռքով ոչնչացվում են վրաց մայրաքաղաքի պատմության հուշարձանները… և այդ կատարվում է իշխանությունների աչքի առաջ, «մամուլիշվիլոբա» (հայրենասիրության) պիտակի տակ:

«Հողը խաբար չտա ձեզ» իմ խնկելի վրացագետներ՝ Կորնելի Կեկելիձե, Իվանե Ջավախիշվիլի, Ակակի Շանիձե, Լևոն Մելիքսեթ-Բեկ, Սարգիս Կակաբաձե, Էքվթիմե Թաղայշվիլի և բազում-բազում այլ երանելիներ: Այս օրին էլ հասանք, որ *Նորաշենի* հայկական եկեղեցի լինելն էլ պիտի ապացուցենք…